ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 5

Ք. Երևան, 10 հունիսի 2021 թվական

Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի (ՍԱՏՄ) կառավարման խորհրդի (Խորհուրդ) հերթական նիստի

Մասնակցում էին՝

Վ. Քերոբյան – ՀՀ էկոնոմիկայի նախարար (Խորհրդի նախագահ)

Ա. Ասոյան – ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ա. Պողոսյան – ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Տ. Գաբրիելյան – ՀՀ էկոնոմիկայի նախարարի տեղակալ (Խորհրդի անդամ)

Լ. Նանուշյան – ՀՀ առողջապահության նախարարի առաջին տեղակալ (Խորհրդի անդամ)

Մ. Սանդոյան - «ՓՄՁ համագործակցության ասոցիացիա» ՀԿ (Խորհրդի անդամ)

Ա. Առաքելյան – ՀՀ ԳԱԱ-ի Մոլեկուլային կենսաբանության ինստիտուտի տնօրեն, ավագ գիտաշխատող (Խորհրդի անդամ)

Է.Բասենցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության փաստաթղթաշրջանառության բաժնի պետ (Խորհրդի քարտուղար)

Հրավիրված էին՝

Գ. Ավետիսյան- ՍԱՏՄ ղեկավար

Գ. Սարոյան- ՍԱՏՄ ղեկավարի տեղակալ

Մ. Երիցյան- ՍԱՏՄ իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչության պետ

Գ. Հարությունյան – ՍԱՏՄ ղեկավարի օգնական

Ա.Հակոբյան - ՍԱՏՄ որակի ապահովման վարչության պետի պարտականությունները կատարող

Ա. Դանիելյան-ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի Շուկայի վերահսկողության և Սննդամթերքի անվտանգության ոլորտների համակարգման և մեթոդաբանության վարչության պետ

Ա. Ավետիսյան - ՀՀ վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի զարգացման ծրագրերի վարչության խորհրդական:

Բացակայում էին՝

Ք. Գրիգորյան – ՀՀ արդարադատության նախարարի առաջին տեղակալ

(Խորհրդի անդամ),

Բ. Պիպոյան - «Իրազեկ և պաշտպանված սպառող» հասարակական կազմակերպության ղեկավար (Խորհրդի անդամ)

Մ. Բեգլարյան – ՀՀ ԳԱԱ էկոլոգանոոսֆերային հետազոտությունների կենտրոնի սննդի շղթայի ռիսկերի գնահատման տեղեկատվական վերլուծական կենտրոնի փորձագիտական խմբի ղեկավար (Խորհրդի անդամ)

Ողջունելով ներկաներին Խորհրդի նախագահ Վ. Քերոբյանը փաստեց, որ քվորումը ապահովված է՝ նիստին մասնակցում են Խորհրդի 10 անդամներից 7-ը: Խորհրդի նախագահը ներկայացրեց օրակարգը: Օրակարգի վերաբերյալ Մ. Սանդոյանն առաջարկեց, 4-րդ հարցը զեկուցել առաջինը, հաշվի առնելով այն հանգամանքը, որ գործակարգավորչական տեսանկյունից մնացած հարցերը մեկը մյուսին լրացնում են: Քննարկման արդյունքում խորհուրդը որոշեց 4-րդ հարցը տեղափոխել որպես վերջին հարց:

Խորհրդի անդամները 7 կողմ ձայնով հաստատեցին խորհրդի օրակարգը՝ 4-րդ և 5-րդ հարցերը տեղափոխելով:

1. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին հավանություն տալու մասին:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան, Ա, Պողոսյան, Տ.Գաբրիելյան, Ա.Ասոյան, Ա, Առաքելյան, Բ.Պիպոյան, Մ. Սանդոյան)

Գ. Ավետիսյանը ներկայացրեց ՍԱՏՄ-ի 2021 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծի սեղմնագիր տարբերակը:

Նախարարն առաջարկեց հաջորդ հաշվետվությունների մեջ ներառել սննդային գործոնով պայմանավորված թունավորումների վերաբերյալ տեղեկատվություն, նշել դրանց քանակը, թունավորված անձանց թիվը՝ հաշվի առնելով վերջին ժամանակահատվածում երեխաների շրջանում արձանագրված դեպքերը:

Ա.Ասոյանը փաստեց, որ առաջարկությունը բխում է «Տեսչական մարմինների մասին» օրենքից և հաշվետվությունում պետք է ներառվի տվյալ ոլորտում արձանագրված փոփոխությունները:

Լ.Նանուշյանը բարձրացրեց վերջին ժամանակահատվածում մանկապարտեզներում երեխաների մոտ արձանագրված թունավորումների հետ

հարցը՝ հայտնելով, որ անցյալ տարի նման դեպքեր չեն արձանագրվել, ինչը հնարավոր է, որ պայմնավորված է գործնականում ձեռքերի պատշաճ ախտահանման հետ: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ հնարավոր է դեպքերի աճ գրանցվի՝ հետաքրքրվեց ՍԱՏՄ-ի կողմից ձեռնարկվող քայլերով (վերահսկողության ուժեղացում, բացատրական աշխատանքների իրականացում և այլն):

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ պետական վերահսկողություն է իրականացվում համապատասխան մանկապարտեզների, ինչպես նաև հետագծելիության սկզբունքով՝ արտադրողների և մատակարարների նկատմամբ: Կիրառվել են համապատասխան սահմանափակումներ: Արդյունքները դեռ վերլուծվում են: Միաժամանակ նշեց, որ սննդամթերքի անվտանգության միջազգային օրվա շրջանակներում ուսումնական հաստատություններում իրականացվել են իրազեկման աշխատանքներ, բաժանվել են իրազկման թերթիկներ, որտեղ նշվեծ է, թե սննդամթերքների որ տեսակները չի կարելի օգտագործել մանկապարտեզներում և դպրոցներում՝ ելնելով ՀՀ առողջապահության նախարարի հրամանից:

Քննարկվեց մանկապարտեզներում և դպրոցներում սննդկարգի նկատմամբ իրականացվող վերահսկողության խնդիրները՝ շեշտելով, որ հստակ չէ մանկապարտեզների կազմակերպաիրավական տեսակը, նշանակված չէ վերահսկողություն իրականացնող մարմինը, ինչպես նաև վերանայման կարիք ունեն գործող պահանջները, անհրաժեշտ է հաստատել ստուգաթերթ:

Ա.Ասոյանը ներկայացրեց կազմակերպաիրավական տեսակի հստակեցման հետևանքով առաջացող խնդիրները: Նշեց, որ խնդիրները բարձրաձայնվել է և կանոնակարգման նպատակով մշակվել է օրենսդրական փաթեթ և ներկայացվել է Ազգային Ժողով: Միաժամանակ ներկայացրեց հիմնավորումներ և նշեց, որ անհրաժեշտ է վերանայել և արդիականացնել ՀՀ առողջապահության նախարարի հրամանով սահմանված նորմերը, որից հետո Գրասենյակի կողմից կիրկանացվի ստուգաթերթի մշակում:

Լ.Նանուշյանը հայտնեց, որ սննդակարգի մշակման համար համատեղ կաշխատեն:

Մ.Սանդոյանն առաջարկեց, որ մակնշման խախտումներ կամ ժամկետանց սննդամթերք հայտնաբերելու դեպքում ՍԱՏՄ-ն իր պաշտոնական կայք էջում կամ «Ֆեյսբուք» սոցիալական ցանցի միջոցով ներկայացնի տեղեկատվություն: Մի կողմից դա զսպող մեխանիզմ կլինի տնտեսավարող սուբյեկտի համար, որը ևս նման խախտում թույլ չի տա, մյուս կողմից էլ սպառողների մոտ կբարձրանա ՍԱՏՄ-ի վարկանիշը:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ ՍԱՏՄ-ի կողմից իրազեկման գործընթացն իրականացվում է, կասեցման ենթարկված տնտեսավարող սուբյեկների վերաբերյալ տեղեկատվությունը հրապարակվում է պաշտոնական կայքում, որն էլ տարածվում է նաև առնվազն 30 լրատվական կայքերի կողմից:

Լ. Նանուշյանը հետաքրքրվեց հաշվետվության մեջ նշված յոդացման աղի նկատմամբ իրականացված պետական վերահսկողության արդյունքում արձանագրված խախտումներով, մասնավորապես ինչ տիպ են դրանք, ներմուծված աղում է հայտնաբերվել, և եթե այո, ապա որ երկրներից են ներմուծվել:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ յոդացված չեն եղել և հանվել են շրջանառությունից: Միաժամնակ նշեց, որ վերահսկողության արդյունքների մանրամասն վերլուծությունը կներկայացվի ՀՀ առողջապահության նախարարություն:

Նախագահը հանձրարարեց ՍԱՏՄ-ին նախակրթարաններին մատակարարվող սննդամթերքի շրջանառության շղթայում իրականացնել վերահսկողություն, որպեսզի ստուգվի սննդամթերք տեղափոխող փոխադրամիջոցները:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ կիրականացվեն ստուգումներ, միաժամանակ նշեց, որ ներկայումս համագործակցում են Երևանի քաղաքապետարանի հետ:

Նախագահը հետաքրքրվեց «Մեկ պատուհան» համակարգի «Լամբրոն» ծրագրով:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ ԵԱՏՄ անդամ երկրների հետ հաղորդակցության տեսանկյունից այն շատ կարևոր է, ինչպես նաև կպարունակի պետական վերահսկողության վերաբերյալ ամբողջ տեղեկատվությունը: Սակայն ֆինանսական միջոցների բացակայության հետևանքով այն չի շահագործվում: Տարեկան անհրաժեշտ է մոտ 23 միլ. ՀՀ դրամ:

Նախագահը նկատեց, որ հնարավոր է ծրագրի շահագործման համար ծախսվի գումար, սակայն ստացվի, որ ավելի շատ խնայվում է:

Գ.Ավետիսյանն հայտնեց, որ նման հաշվարկ չի իրականացվել:

Նախագահն առաջարկեց, որ ՍԱՏՄ-ն ծրագրի ներդրման համար ներկայացնի հստակ հիմնավորում:

Ա.Պողոսյանը հաշվետվության նախագծի վերաբերյալ ներկայացրեց իր նկատառումները: Հայտնեց, որ հաշվետվության տեքստում նշված է, որ տնտեսավարող սուբյեկտների ներկայացուցիչներն այցելում են ՍԱՏՄ՝ իրազեկման և պարզաբանում ստանալու նպատակով: Առաջարկեց մտածել այս պրակտիկան վերանայելու ուղղությամբ: Ներկայացրեց հարկային մարմինների փորձը:

Գ.Ավետիսյանը ներկայացրեց, որ ՍԱՏՄ-ի պաշտոնական կայքում անհրաժեշտ տեղեկատվությունը հրապարակված է, սակայն որոշ մարդիկ նախընտրում են անձամբ ստանալ իրենց հուզող հարցերի պատասխանները: Հայտնեց, որ նկատի կունենան առաջարկը և կձեռնարկվեն համապատասխան միջոցներ:

Նախագահն առաջարկեց վերլուծել կայքում առկա տեղեկատվությունը, մշակել ուղեցույցներ, իրազեկման թերթիկներ և տեղադրել կայքում:

Ա.Ասոյանն առաջարկեց հաշվետվության նախագծի «ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՌԱՋԱՐԿՆԵՐ» հատվածում Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքով սահմանված տուգանքների չափերի վերանայման անհրաժեշտությունը նպատակահարմար է հստակեցնել, մասնավորապես տուգանքների չափը բարձրացվում է, թե իջեցվում, որ ոլորտներում:

Ա.Պողոսյանը հայտնեց, որ հաշվետվության նախագծում նշված է, որ մեկ դիմում բողոք է եղել և հետաքրքրվեց, թե ինչ ատյան է ներկայացվել բողոքը: Նշեց, որ մեկ բողոքի առկայությունը կարող է երկակի ընկալվել, այսինքն ամեն ինչ շատ լավ է և մարդիկ դժգոհ չեն վարչարարությունից կամ վստահություն չկա բողոքարկման հարթակի նկատմամբ:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ բողքը ներկայացվել է վերադասության կարգով ՍԱՏՄ՝ մարմնի ղեկավարին: Ներկայացրեց ՍԱՏՄ-ում վարչական վարույթի իրականացման գործընթացը:

Ա.Պողոսյանն իր մտահոգությունը հայտնեց նշանակված տուգանքների վիճակագրության վերաբերյալ: Մասնավորապես՝ ամբողջ եռամսյակի ընթացքում կայացվել է 90 տուգանք նշանակելու մասին որոշում, բայց նշանակված տուգանքը մոտ 5,4 միլ. ՀՀ դրամ է, որից հավաքագրվել է ընդհամենը 1,5 միլ ՀՀ դրամ: Մի տուգանքին բաժին է ընկնում 15000 ՀՀ դրամ:

Գ.Ավետիսյանը հայտնեց, որ անհրաժեշտ է համապատասխան փոփոխություններ կատարել Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում՝ բարձրացնելով տուգանքի գումարի չափը: Միաժամանակ ներկայացրեց, որ նշանակված տուգանքների հավաքագրման վերաբերյալ տեղեկատվությունը ներկայացված է ապրիլի 1-ի դրությամբ և տուգանքները նշանակված են 1-ին եռամսյակում: Տուգանքի վերաբերյալ որոշումներն

անբողոքարկելի դառնալուց հետո միայն հնարավոր է ներկայացնել հարկադիր կատարման:

Նախագահն առաջարկեց հաշվետվության մեջ ընդգրկել նաև նախորդ եռամսյակում նշանակված, սակայն հաշվետու ժամանակահատվածում գանձված տուգանքների վերաբերյալ տեղեկատվություն:

Խորհուրդը քննարկեց Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում համապատասխան փոփոխությունների խիստ անհրաժեշտությունը: Ա.Ասոյանը հայտնեց, որ ներկա պահին առկա է օրենսդրական փաթեթ, որը գտնվում է ՀՀ արդարադատության նախարարությունում: Միաժամանակ առաջարկեց Խորհրդի անդամներին Խորհրդի քարտուղարություն ներկայացնել իրենց առաջարկությունները կոնկրետ հոդվածների կամ չափերի վերաբերյալ:

Նախագահը նշեց, որ պետք է առաջնորդվել այն սկզբունքով, որ վարչական պատասխանատվության միջոցը պետք է զսպող ազդեցություն ունենա տնտեսավարող սուբյեկտի համար:

Տ.Գաբրիելյանն առաջարկեց այս ձևաչափում փոփոխություններ կատարել նաև «Հայաստանի Հանրապետությունում ստուգումների կազմակերպման և անցկացման մասին» օրենքում:

Ա.Պողոսյանը նկատեց, որ հաշվետվության մեջ անասնաբուժության հատվածում ստուգումների վերաբերյալ ներկայացված տեղեկատվությունն ամբողջական չէ և անհրաժեշտ է լրամշակել:

Ա.Առաքելյանը նշեց, որ հաշվետվության նախագծի գիտական կազմակերպությունների հետ համագործակցության հատվածում նշված են 2020 թվականի ընթացքում կատարված գործողություններ և առաջարկեց այն հանել նախագծից:

Գ.Ավետիսյանն հայտնեց, որ Խորհրդի անդամների կողմից ներկայացված բոլոր առաջարկություններն ընդունելի է և հաշվետության նախագծում կկատարվեն համապատասխան փոփոխություններ:

Խորհրդի անդամները 7 կողմ ձայներով որոշեցին հավանություն տալ Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական

մարմնի 2021 թվականի առաջին եռամսյակի հաշվետվության նախագծին՝ հաշվի առնելով Խորհրդի անդամների ներկայացրած առաջարկությունները:

2. Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի 2021 թվականի 1-ին եռամսյակի կատարողականի գնահատումը հաստատելու մասին:

(Վ. Քերոբյան, Գ.Ավետիսյան)

Խորհուրդը 7 կողմ ձայներով որոշեց հարցը ներկայացնել էլեկտրոնային քվեարկության:

Խորհրդի նախագահը հայտնեց, որ ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ քննարկել օրակարգի 3-5-րդ հարցերը, սակայն կարևորելով այդ հարցերը, առաջարկեց այն քննարկել հաջորդ նիստում, որը կայանալու է 2021 թվականի հունիսի 24-ին, ժամը 14.00-ին:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ ՊԱՇՏՈՆԱԿԱՏԱՐ,
ՍՆՆԴԱՄԹԵՐՔԻ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ
ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ Վ. ՔԵՐՈԲՅԱՆ

ԽՈՐՀՐԴԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ Է. ԲԱՍԵՆՑՅԱՆ